ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, 091771626, pam-bak@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 փետրվարի 2022 թվականի N 77-Ա

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ ՄԱՐԳԱՀՈՎԻՏ 06-070-0122-0083 ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածով, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, 64-րդ հոդվածի 8-րդ, 16-րդ կետերով, ՀՀ կառավարության 29.12.2005 թվականի թիվ 2387-Ն որոշումով, հաշվի առնելով Արժանիկ Թադևոսի Խաչատրյանի դիմումը, որակավորված անձի կողմից կազմված հողամասի հատակագիծը, հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 03.04.1991թ թիվ 02 որոշումից քաղվածքը, այն հանգամանքը, որ հողամասն ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում, չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, և այն կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտում, կառուցված չէ քաղաքաշինության նորմերի և կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վերաանգնել Արժանիկ Թադևոսի Խաչատրյանին պատկանող 06-070-0122-0083 ծածկագրով 0.07813 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի հողհատմացման հիմքերը համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:

2.Սույն որոշումից ծագող իրավունքները և պարտականությունները ենթակա են պետական գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

Համայնքի ղեկավար՝ **ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

2022 թ. փետրվարի 15
գ.Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

15 ՓԵՏՐՎԱՐԻ 2022 թվականի թիվ 78-Ա

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ <<ԷՎԵԼՊԻՍ>> ՍՊԸ-ԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇՏՎԱԾ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածով,, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով, հիմք ընդունելով <<ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ>> ԱՁ-ի կողմից կազմված հողամասի հատակագիծը, քանի որ հողամասի սահմանները չեն արտացոլված կադաստրային գարտեզում, հաշվի առնելով <<ԷՎԵԼՊԻՍ>> ՍՊԸ-ի դիմումը օգտագործման իրավունքով ընկերությանը հատկացված հողամասի սահմանները տեղանքում արտացոլված կետերի համաձայն կադաստրային քարտեզներում և օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերում ամրագրելու մասին

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել <<ԷՎԵԼՊԻՍ>> ՍՊԸ-ին օգտագործման իրավունքով հատկացված պետական սեփականություն հանդիսացող ջրային հողերի նպատակային նշանակության 06-102-0249-0001 կադաստրային ծածկագրից առանձնացված 1,015900 հա հողամասի սահմանները համաձայն հատակագծի:
2.Հողամասին տրամադրել ՀՀ Լոռու մարզ Փամբակ համայնք գյուղ Վահագնաձոր 1-ին փողոց 167 հողամաս փոստային հասցե:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, 091771626, pam-bak@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 փետրվարի 2022 թվականի N 79-Ա

ԱՐԵՎՀԱՏ ՍԱՖԱՐՅԱՆԻՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշման, հիմք ընդունելով Արևհատ Սաֆարյանի հայտը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Արևհատ Սաֆարյանին տալ ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի Բազում գյուղում 9-րդ փողոց 20/1 հասցեում առանձնատուն կառուցելու նախագծման թույլտվություն:
2. Արևհատ Սաֆարյանը պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավար՝ **ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

2022 թ.փետրվարի 15
գ.Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, 091771626, pam-bak@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 փետրվարի 2022 թվականի N 80-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Նորմատիվ իրավական ակտերի մասին,, ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Փամբակ համայնքի Բազում գյուղի վարչական տարածքում գտնվող 06-023-0002-0030 կադաստրային ծածկագրով 0,1020 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասին տրամադրել փոստային հասցե՝ Լոռու մարզ Փամբակ համայնք, գյուղ Բազում, 1-ին փողոց, 1 նրբ. 45 հողամաս:
2. Ուժը կորցրած ճանաչել Փամբակ համայնքի ղեկավարի 10.02.2022թ-ի թիվ 55-Ա որոշումը:
3. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավար՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

2022 թ.փետրվարի 15
գ.Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, 091771626, pam-bak@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 փետրվարի 2022 թվականի N 81-Ա

ԷԴԳԱՐ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՎԱՐՈՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ
ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» 2019 թվականի նոյեմբերի 19-ի ՀՕ-225-Ն օրենքով, ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի "Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին" թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով, քանի որ կառույցը համապատասխանում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված օրինականացման պայմաններին և հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, հաշվի առնելով Էդգար Սերյոժայի Վարոսյանի դիմումը և ինքնակամ կառույցի չափագրման համաձայնությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Փամբակ համայնքի Արջուտ գյուղի վարչական տարածքում գտնվող Էդգար Սերյոժայի Վարոսյանին սեփականության իրավունքով պատկանող 06-019-0015-0006, ծածկագրով 0.2868 հա բնակավայրերի հողերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում բնակելի տան մաս կազմող տնտեսական նշանակության 73,22քմ. կառույցը և 23,76քմ աստիճանահարթակը:

2. Պարտավորեցնել Էդգար Սերյոժայի Վարոսյանին համայնքին վճարել արտաքին չափերով 73,22 քմ. բնակելի տան մասի օրինականացման վճարը՝ 63990 դրամ և 23,76 քմ աստիճանահարթակի օրինականացման վճարը 12445 դրամ : Ընդամենը 76435 դրամ:

3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Լոռու մարզային ստորաբաժանումում:

Համայնքի ղեկավար՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

2022 թ.փետրվարի 15
գ.Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, 091771626, pam-bak@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» փետրվարի 2022 թվականի№82Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 06-019-0015-0005 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ, ԷԴԳԱՐ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՎԱՐՈՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԿԱՌՈՒՅՑԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետով, ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի "Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին" թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի "Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին" թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով, քանի որ կառույցները համապատասխանում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված օրինականացման պայմաններին և հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, հաշվի առնելով Էդգար Սերյոժայի Վարոսյանի դիմումը՝

Որոշում եմ

1. Հայաստանի Հանրապետության Փամբակ համայնքի Արջուտ գյուղի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 06-019-0015-0005 ծածկագրից առանձնացված 132.03 քմ. բնակավայրերի հողերի նպատակային նշանակության, այլ գործառնական նշանանակության հողամասը փոխադրել բնակավայրերի հողերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանանակության:

2. Ճանաչել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի սեփականության իրավունքը, Էդգար Սերյոժայի Վարոսյանի կողմից համայնքային սեփականություն հանդիսացող 06-019-0015-0005 կադաստրային ծածկագրից առանձնացված բնակավայրերի հողերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողերի գործառնական նշանակության 132.03 քմ հողամասի և ինքնակամ կառուցված արտաքին չափերով՝ 132.03 քմ բնակելի տան մաս կազմող տնտեսական նշանակության կառույցի նկատմամբ, համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:

3. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Փամբակ համայնքի Արջուտ գյուղի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 06-019-0015-0005 ծածկագրից առանձնացված 132.03 քմ. հողամասում, Էդգար Սերյոժայի Վարոսյանի կողմից ինքնակամ կառուցված այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտի իրավունք չառաջացնող, բնակելի տան մաս կազմող տնտեսական նշանակության արտաքին չափերով 132.03 քմ կառույցը :

4. 06-019-0015-0005 կադաստրային ծածկագրով 132.03 քմ. բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասին և շինություններին տրամադրել Փամբակ համայնք գ. Արջուտ 19-րդ փող.,18-րդ նրբանցք Թիվ 5/1 փոստային հասցե:

5. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Լոռու մարզային ստորաբաժանումում:

Համայնքի ղեկավար՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

2022 թ.փետրվարիի 15
գ.Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետություն Լոռու մարզ, Փամբակ համայնք
Փամբակի համայնքապետարան, 1 փող. 23

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 15 » Փետրվարի 2022 թվականի N 83-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՆՎԻՐԱԲԵՐՎՈՂ ԳՈՒՅՔՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածով, ,,Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 30-րդ կետով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի անունից ընդունել որպես նվիրաբերություն ,,Հայաստանի Մանուկներ,, բարեգործական հիմնադրամ ՀՄԴ-ին սեփականության իրավունքով պատկանող 06-034-0020-0012 կադաստրային ծածկագրում գտնվող 0,148525 հա բնակավայրերի հողամասը:

2. Օրենքով սահմանված կարգով կնքել նվիրաբերությունն ընդունելու պայմանագիր:

Համայնքի ղեկավար՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

2022թ. Փետրվարի 15
Փամբակ համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, 091771626, pam-bak@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 փետրվարի 2022 թվականի N 84-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով

Որոշում եմ

1. Փամբակ համայնքի Լեռնապատ համայնքի վարչական տարածքում գտնվող 06-041-0035-0001 կադաստրային ծածկագրով 0.0772 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասին և բնակելի տանը տրամադրել փոստային հասցե՝ Լոռու մարզ Փամբակ համայնք գյուղ Լեռնապատ, 41-րդ փողոց, 33 բնակե տուն հասցե:
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:
3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավար՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

2022 թ.փետրվարի 16
գ.Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, 091771626, pam-bak@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«16» փետրվարի 2022 թվականի №85Ա

ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 06-019-0064-0008 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ, ԱՐՋՈՒՏ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊՈԱԿ-Ի ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԿԱՌՈՒՅՑԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետով, ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի "Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին" թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի "Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին" թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով, քանի որ կառույցները համապատասխանում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված օրինականացման պայմաններին և հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, հաշվի առնելով Արջուտի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ի դիմումը և ինքնակամ կառույցի հաշվառման համաձայնագիրը՝

Որոշում եմ

1. Հաստատել Գասպար Վեքիլյանի կողմից կազմած պետական սեփականություն հանդիսացող 06-019-0064-0008 ծածկագրով հողամասի հատակագիծը:

2. Օրինականացնել և Հայաստանի Հանրապետության սեփականությունը ճանաչել Հայաստանի Հանրապետության Փամբակ համայնքի Արջուտ գյուղի վարչական տարածքում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող 06-019-0064-0008 ծածկագրով 0,74882 հա հողամասում Արջուտի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ի կողմից ինքնակամ կառուցված այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների, իրականացված և հարկադիր սերվիտուտի իրավունք չառաջացնող, 56.49քմ մակերեսով հասարակական ճաշարանը:

3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Լոռու մարզային ստորաբաժանումում:

Համայնքի ղեկավար՝ **ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

2022 թ.փետրվարիի 16
գ.Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետություն Լոռու մարզ, Փամբակ համայնք
Փամբակի համայնքապետարան, 1 փող. 23

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 16 » Փետրվարի 2022 թվականի N 86-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԼՈՒՍԻԿ ԲԱԲԱՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ և 4-րդ կետերի, Փամբակ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 13-Ն որոշման հավելվածի 1-ին մասի 9-րդ կետի, հիմք ընդունելով ԱՁ Լուսիկ Բաբայանի 2022 թվականի փետրվարի 09-ի հայտը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Անհատ ձեռնարկատեր Լուսիկ Բաբայանի /ՀՎՀՀ 66876059/ հայտը բավարարել և նրան տալ Փամբակ համայնքի Լեռնապատ գյուղի 20 փողոց 4 հասցեի շինությունում (34.0 քմ մակերեսով հիմնական շինությունում) ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների վաճառքի թույլտվություն 2022 թվականի I եռամսյակի համար:

2. Աշխատակազմի առաջատար մասնագետին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գործունեության թույլտվության համար նախատեսված տեղական տուրքերի գանձումը և սահմանված կարգով տրամադրել թույլտվությունը հավաստող փաստաթուղթը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավար՝ **ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

2022թ. Փետրվարի 16
Փամբակ համայնք